

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆԻ «ՆԱԽԱՇԱԽԻՂ» ԳՐՔԻ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ*

ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Բանալի բառեր՝ Խ. Աբովյան, XIX դար, Թիֆլիս, «Նախաշախիղ», Ար-
զանյանց եղբայրներ, մատենագիտություն, գրաքննություն, հայ տպա-
գրություն, պատմություն, տպարան:

Նախաբան

Մեծ լուսավորիչ Խ. Աբովյանի (1809–1848) գրական ժառանգությունը խո-
րուրդամբ ուսումնասիրված է: Առկա աղբյուրագիտական, գրականագիտա-
կան, պատմագիտական մեծաթիվ գրքերը և հոդվածները լավագույնս ներկա-
յացնում են գրողի կյանքը, գործունեությունը և ստեղծագործական ուղին:
Այս ամենով հանդերձ նոր փաստերի ի հայտ գալով, Խ. Աբովյանը և իր ժա-
ռանգությունը շարունակում են մնալ հետազոտողների ուշադրության կենտ-
րոնում:

Խ. Աբովյանի առաջին գործի՝ «Նախաշախիղ»-ի¹ հրատարակության
տարեթիվը և տպարանների մասին կարծիքներն առ այսօր իրարամերձ են:
Մատենագետ Հայկ Դավթյանը գիրքը նկարագրել է՝ ձեռքի տակ ունենալով
առ այսօր մեզ հայտնի երկու թերթի օրինակները (առանց անվանաթերթերի),
որոնցից առաջինը (2–76 էջ, կազմի չափսը՝ 17 x 12 սմ, շարվ. չափսը՝ 16 x
9,7 սմ) պահպանվում է Երևանի Զարենցի անվան գրականության և արվեստի
թանգարանի (ԳԱԹ) Ղ. Աղայանի ֆոնդում, իսկ երկրորդը (3–96 էջ, կազմի
չափսը՝ 21,5 x 12,5 սմ, շարվ. չափսը՝ 16 x 9,7 սմ)՝ Մ. Մաշտոցի անվան Մա-
տենագրարանում (ՄՄ): Մատենագիտական նկարագրության մեջ Հ. Դավթ-
յանը նշել է նաև, որ գիրքը տպագրվել է Թիֆլիսի Արզանյանց եղբայրների
և Ներսիսյան դպրոցի տպարաններում 1838, 1844–1845 թթ.²:

* Ներկայացվել է 17. IV. 2024 թ., գրախոսվել է 29. IV. 2024 թ., ընդունվել է
տպագրության 10. VII. 2024 թ.: Հոդվածը որպես զեկուցում ընթերցվել է
2023 թ. հոկտեմբերի 31-ին ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինս-
տիտուտում Խ. Աբովյանի անհետացած 175-րդ տարեկիցին նվիրված հայագի-
տական հանրապետական գիտաժողովում:

¹ Մատենագետ Գարեգին Զարհանյանը սխալմամբ սույն երկը վերագրել է
Գևորգ Աբովյանին, իսկ Արսեն Ղազիկյանի մոտ գիրքը ընդհանրապես հիշատակ-
ված չէ (տե՛ս Զ ա ռ Է ճ ա ն ա լ ե ա ն. 1883, 1, Ղ ա զ ի կ ե ա ն. 1909, 9):

² Դ ա վ Թ յ ա ն. 1967, 236:

«Նախաշաւիղ»-ի 2 օրինակների թերի լինելն ու անվանաթերթերի բացակայությունը³ էլ ավելի են դարձել տպագրության տարեթվի և տպարանների շուրջ տարակարծությունների պատճառ: 1952 թ. խնդրի շուրջ հանդես են եկել բանասերներ Արամ Բաբայանը, Գուրգեն Սևակն ու Պրոն Հակոբյանը: Առաջին երկուսի կարծիքով գրքի սկզբի 18 մամուլը տպագրվել է Թիֆլիսի Արզանյանց եղբայրների տպարանում 1838 թ., իսկ վերջին երկու մամուլը՝ Ներսիսյան դպրոցի տպարանում 1844–1845 թթ⁴: Նրանց հակադարձել է արեւմտահայ Պ. Հակոբյանը՝ հավաստելով, որ գիրքը տպագրվել է միայն Արզանյանց տպարանում 1838 թ.⁵: Կան նաև այլ տեսակետներ, որոնց կանգնողառանք հաջորդելով:

«Նախաշաւիղ»-ի ձեռագիր տարբերակը և Խ. Աբովյանի մասնավոր ուսումնարանը

Խ. Աբովյանի մանկավարժական առաջին ձեռնարկը՝ «առաջնապտուղ»-ը, պատրաստ է եղել 1838 թ.: 1839 թ. ակադեմիկոս Քրիստիան Մարտին ֆոն Ֆրենկին գրած նամակում հեղինակն իր գործն անվանել է «Տարերք արդի հայերէնի»⁶: Ըստ Երվանդ Շահազիզի՝ վերնագրվել է «Ձեռնարկ սկզբնական դասականութեան նորագոյն մանկավարժական մեթոդիկայի»⁷, իսկ Թիֆլիսի գիմնազիայի մանկավարժական ժողովի 1843 թ. դեկտեմբերի 22-ի արձանագրության մեջ, ինչպես նաև Խ. Աբովյանի ժամանակակից և բարեկամ Մարտիրոս Տեր Ազարյանցի հոդվածում, հիշատակվել է «Նախաշաւիղ» խորագրով⁸: «Ուղեւորութիւն դէպի Անիի աւերակները» ուղեգրության մեջ (1847 թ.) Խ. Աբովյանը գիրքը հիշատակել է «Ընթերցարան ժողովրդական ուսումնարանների համար» վերնագրով⁹:

Ըստ Պ. Հակոբյանի՝ գիրքը կազմվել է Խ. Աբովյանի ջանքերով 1837 թ. հիմնադրված մասնավոր ուսումնարանի համար¹⁰, սակայն գրքի վրա հեղինակը սկսել է աշխատել 1836 թվականից¹¹:

Խ. Աբովյանը Թիֆլիսի գավառական դպրոցի ուսուցիչ է նշանակվել 1837 թ. փետրվարի 12-ին՝ նպատակ ունենալով մանուկների դաստիարակությունը կազմակերպել եվրոպական նոր մոտեցումներով, որոնք մեծամասամբ հակասել են այդ ժամանակահատվածում գործող կրթական համակարգի պահանջներին: Իր երազանքն իրականություն դարձնելու նպատակով, օգտվելով Թիֆլիսի ուսումնարանների վերատեսուչ Հեսսենմյուլլերի բարյացակամությունից, առանց պաշտոնական թույլտվության՝ նա հիմնել է իր մասնավոր ուսումնա-

³ Ըստ Ա. Բաբայանի՝ գիրքը տպագրվել է առանց անվանաթերթի (Բ ա բ ա - յ ա ն. 1952, 3):

⁴ Բ ա բ ա յ ա ն. 1952, 3–4, Սևակ. 1952, 3:

⁵ Հ ա կ ո բ յ ա ն. 1952, 164–171:

⁶ Շ ա հ ա զ ի զ. 1940, 117:

⁷ Շ ա հ ա զ ի զ. 1940, 117:

⁸ Շ ա հ ա զ ի զ. 1940, 129, Տ է ր Ա զ ա ր ե ա ն ց. 1861, 541:

⁹ Ա բ ո վ յ ա ն. 1956, 195:

¹⁰ Հ ա կ ո բ յ ա ն. 1955ա, 50–51: Պահպանվել է Խ. Աբովյանի՝ ծնողների հետ կնքած պայմանագրի մի օրինակ, որը փաստում է, որ 1838 թ. ուսումնարանն արդեն ամբողջությամբ գործում էր (տե՛ս Շ ա հ ա զ ի զ. 1940, 101–102):

¹¹ Հ ա կ ո բ յ ա ն. 1987, 86:

րանը¹²։ Բնականաբար, ուսումնարանում կրթական գործընթացն ապահովելու համար նրան անհրաժեշտ էին նաև հայերեն դասագրքեր։ Խ. Աբովյանին չէր բավարարում այդ շրջանում դպրոցներում գործածվող դասագրքերի բովանդակությունը։ Դրանք չէին համապատասխանում կրթական այն մոդելին, որը ներդրվել էր մեծ լուսավորչի մասնավոր ուսումնարանում։ Այս մասին նա վկայում է 1838 թ. մայիսի 19-ին ակադեմիկոս Քրիստիան Ֆրենկին գրած նամակում. «... մանուկներին կրթելն աշխարհիս յերեսին ամեն բան ե ինձ համար», և որին խանգարում են գրավոր կարգադրությունները, որոնց բացակայության դեպքում ինքն իր «գավառական դպրոցով կկարողանա մրցել յեվրոպայի լավագույն դպրոցների հետ»¹³։

Խ. Աբովյանի Ֆրիդրիխ Բոդենշտեդին ուղղված նամակում կարդում ենք. «Ձեռնարկեցի իմ փոքրիկ, բայց դժբախտ հաստատության հիմնադրմանը, որպեսզի սկզբից իմ մտքերին ու գագաթունքներին համապատասխան աշխատակիցներ պատրաստեմ»¹⁴։ Այս գործընթացը սկսվելու էր մայրենի լեզվի և գրականության որևէ ձեռնարկից, որը պետք է արտացոլեր լեզվական այն ըմբռնումն ու գաղափարները, որոնց կրողն էր ինքը՝ Աբովյանը։

Մասնավոր ուսումնարանում կրթական գործը կազմակերպելու համար անհրաժեշտ էր կամ ձեռագիր տետրակը բազմացնել (ինչն ընդունված էր այդ շրջանում), կամ տպագրել։ Ձեռագիր դասագրքի բազմացումը շատ ժամանակ ու ջանք էր պահանջում, ահա՛ ինչու գրքի տպագրությունն ավելի նպատակային էր։ Տպագրության դեպքում, սակայն, նախ պետք է լուծվեր գրաքննության խնդիրը, գտներ գրամական միջոցներ, տպարան և այլն։

«Նախաշաւիղ»-ը և գրաքննության պահանջները

Ռուսական կայսրությունում ցանկացած ուսումնական ձեռնարկ տպագրելու համար անհրաժեշտ էր ունենալ ժողովրդական լուսավորության նախարարության արտոնությունը։ Բացի դրանից, տնտեսական բաժնի հետ նախապես պետք է հստակեցվեին ֆինանսական բոլոր հարցերը¹⁵։ Օրենքի կատարումը վերահսկելու էր Երրորդ բաժանմունքը¹⁶, որն իրավասու էր սահմանել համապատասխան պատժամիջոցը, եթե առանց համապատասխան թույլտվության տպագրվեր թեկուզ մեկ էջ։

Ըստ գրաքննության օրենքների մայրենի լեզվի ձեռնարկ կարող էին կազմել միայն առարկան դասավանդող ուսուցիչները¹⁷, մինչդեռ Խ. Աբովյանը եղել է պատմության, մաթեմատիկայի և ռուս գրականության ուսուցիչ¹⁸։

¹² Ռուսական կայսրությունում 1834 թ. հուլիսի 1-ի կանոնադրությամբ սահմանվում էր մասնավոր ուսումնարաններ հիմնելու կարգը։ Դա կարող էր թույլատրել միայն ժողովրդական լուսավորության նախարարությունը (տե՛ս Ղ ա - գ ա ր յ ա ն. 1979, 67–68)։

¹³ Շ ա հ ա գ ի գ. 1940, 110–111։

¹⁴ Ա բ ո վ յ ա ն. 1956, 391։

¹⁵ Ղ ա գ ա ր յ ա ն. 1974, 69։

¹⁶ Երրորդ բաժանմունքը ստեղծվել էր 1826 թ. հուլիսի 3 (15)-ին Նիկոլայ I կայսեր հրամանով Ալեքսանդր Բենկենդորֆի ղեկավարությամբ Սանկտ Պետերբուրգում։

¹⁷ Ղ ա գ ա ր յ ա ն. 1974, 69։ Տե՛ս նաև Сборник. 1864, 685–686.

¹⁸ Ղ ա գ ա ր յ ա ն. 1974, 69։

Հետևաբար, նա չէր կարող հավակնել ստանալու իր գիրքը տպագրելու թույլտվություն և դրամական աջակցություն:

Նշենք, որ Այսրկովկասում պաշտոնական գրաքննությունն ուժի մեջ էր մտել 1837 թ. դեկտեմբերի 23-ից Նիկոլայ I կայսեր № 10828 հրամանագրով, ըստ որի՝ թիֆլիսում տեղական լեզուներով հրատարակված գրքերի գրաքննությունը ենթարկվելու էր Վրաստանի, Կովկասի և Անդրկովկասի երկրամասերի գլխավոր կառավարչի գրասենյակին¹⁹: Սակայն հայկական տպագրության գրաքննության դեպքում այս որոշումն Այսրկովկասում փաստացի չի գործադրվել մինչև 1840-ական թվականների կեսերը²⁰, որի փոխարեն գործել է հայ հոգևոր գրաքննությունը²¹: Բոլոր կենսագիրները փաստել են, որ Խ. Աբովյանը խնդիրներ է ունեցել Ս. Էջմիածնի և մի շարք բարձրաստիճան հոգևորականների հետ, հոգևոր դասի աջակցությունը ևս դժվար հասանելի էր նրա համար²²:

Խոչընդոտներից խուսափելու համար Խ. Աբովյանը կրկին դիմել է Հեսենմյուլլերին, ով, չրջանցելով օրենքները, արտոնել է գրքի տպագրությունը²³: «Նախաշաւիղ»-ը մուտք է գործել տպարան 1838 թ. սկզբին: Տպագրությունը ստանձնել են Արզանյանց եղբայրները, քանի որ եղբայրներից Դավիթին վերապահված էր նաև հայերեն գրքեր գրաքննելու իրավունք: Մեկ այլ գործի չրջանակում, սակայն, 1838 թ. սկզբին տեղի գործակալներն ահազանգել են ժողովրդական լուսավորության նախարարությունը Հեսենմյուլլերի չարաշահումների մասին²⁴, որից հետո սկսել են ստուգել նրան վերաբերվող բոլոր գործերը: Ստուգումներին զուգահեռ՝ կասեցվել են նրա արտոնությամբ սկսված բոլոր գործերը:

Որոշումը փտանգել է նաև Արզանյանց նորաստեղծ տպարանի գործունեությունը, ինչի պատճառով «Նախաշաւիղ»-ի տպագրությունն ընդհատվել է: Այս մասին մի քանի անգամ Խ. Աբովյանն ակնարկել է 1839 թ. ակադեմիկոս Բ. Ֆրենկին գրած նամակներում՝ նշելով, որ Հեսենմյուլլերի ձեռքակալությամբ կորցրել է իր միակ նեցուկը, որ նա կարգադրել էր սկսել գրքի տպագրությունը, սակայն ձեռքակալության պատճառով «... ամեն բան անսկիզբ և անվերջ մնաց»²⁵:

«Նախաշաւիղ»-ի տպագրության թվականի ճշգրտում

Համադրելով փաստերն ու համեմատելով գրքի «Նախաշաւիղ»-ի մեջ հասանելի երկու օրինակները՝ կարծում ենք, որ տպագրության արտոնությունից

¹⁹ Պ ե տ ո յ ա ն. 2020ա, 307:

²⁰ Պ ե տ ո յ ա ն. 2020բ, 49:

²¹ Պ ե տ ո յ ա ն. 2021, 98:

²² Ե Ր Ի Գ Ե Ա Ն. 1894, 412: Նույն չրջանում Թիֆլիսի Արզանյանց տպարանում տպագրված մի շարք գրքերի անվանաթերթերի դարձերեսին արձանագրվել է հոգևոր գրաքննությունը. «Տպագրեցաւ բարձրաստիճան Կաթողիկոսի Հայոց Տեառն Յովհաննու Կարբեցւոյ», «Հաւանութեամբ թէմակալ առաջնորդի Հայոց Վրաստանի և Հայոց Տեառն Կարապետի», «Հրամանաւ մեծաւորաց» [տե՛ս Ա Ր Գ Ա Ն Ե Ա Ն Գ. 1840, Այբբենարան. Հայոց ի պէտս նորուստում մանկանց (այսուհետ՝ Այբբենարան). 1838, Կրթութիւն աւետարանական. ի պէտս Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ. 1839]:


²³ Ղ ա գ ա Ր յ ա ն. 1979, 71:

²⁴ Ղ ա գ ա Ր յ ա ն. 1979, 71:

²⁵ Շ ա հ ա գ ի գ. 1940, 112, 117:

մինչև Հասենմյուլների գործերի ստուգումների ժամանակահատվածը, երբ կասեցվել են բոլոր գործերը, տպարանում հասցրել են տպագրել առաջին 18 մամուլը: Ասվածը հիմնավորենք հետևյալ փաստերով:

1. Խ. Աբովյանի «Նախաշաւիղ»-ի (նկ. 1) սկզբում առկա է մի զարդանախշ, որը կա նաև Արզանյանց տպարանում 1838 թ. տպագրված երկու այլ գրքերում՝ «Դարաստան»-ում²⁶ (նկ. 2) և «Այբբենարան»-ում²⁷ (նկ. 3):



Նկ. 1:



Նկ. 2:




Նկ. 3:

2. «Նախաշաւիղ»-ի մեջ (նկ. 4) օգտագործված ֆ տառը հակառակ է տպված, ինչը տպագրական վրիպակ է: Համեմատելով նույն թվականին Արզանյանց տպարանում հրատարակված «Այբբենարան»-ի հետ (նկ. 5)՝ պարզ է դառնում, որ երկու գրքում էլ ֆ տառն այդպես է տպված: Տպագրության ոլորտում առաջին քայլերն անող Արզանյանց եղբայրների տպարանի համար տեխնիկական վրիպակները բնական էին: 1840-ական թվականների սկզբին այդտեղ տպագրված գրքերում այլևս նման վրիպակներ չեն նկատվում:



Նկ. 4:



Նկ. 5:

3. Գրքի առաջին 18 մամուլն աչքի չի ընկնում գեղարվեստական բարձր հարդարանքով. օգտագործված է միայն մեկ զարդանախշ: Ավելի ուշ տպագրված վերջին մամուլներում օգտագործված է երեք զարդանախշ: Հաշվի առնելով Արզանյանց տպարանի նորաստեղծ լինելը՝ հասկանալի է, որ առաջին գրքերն աչքի չեն ընկնի գեղարվեստական բարձր հարդարանքով: Բացի այդ՝ զննելով առաջին 18 մամուլը՝ կարող ենք փաստել՝ ոչ թե տառատեսակն է փոխվել, այլ տողերի միջակայքն է լայնացել կամ նեղացել:

²⁶ Դարաստան հատուկտիր գրութոց հայ մատենագրաց ի պէտս մատենագրութեան ի հայոց լեզուէ ի ռուս. 1838:

²⁷ Այբբենարան. 1838:

4. Յուրաքանչյուր գրքի տպագրություն կատարվում է մամուլներով: «Նախաշաւիդ»-ի առաջին 18 մամուլը (72 էջը) քառածալ է (մեկ մամուլը բաղկացած է 4 թերթից): Վերջից ավելացվել է երկու վեցածալ մամուլ (մեկ մամուլը բաղկացած է 6 թերթից): Ըստ Պ. Հակոբյանի՝ վերջից ավելացված էջերը կազմել են 3 մամուլ՝ յուրաքանչյուրը բաղկացած 4 թերթից²⁸: Մեզ հասած երկու օրինակների համեմատությունից պարզ է դառնում, որ վերջից ավելացվել է երկու մամուլ:

5. Մ. Տեր Ազարյանցը հիշատակում է. «Մենք տեսել ենք այս գրքոյկի տպած թերթերը, որոնց տիպը շատ անպիտան է»²⁹: Նա չի նշում՝ տեսել է տպագիր գիրքը, այլ փաստում է, որ դրանք տպված մամուլներ էին: Սա ևս հիմք է տալիս կարծել, որ տպագրությունն ուղղակի ընդհատել են՝ առանց գիրքը կազմելու:

1839 թ. հունվարի 25-ին Հեսսենմյուլլերին ձերբակալել են³⁰, որով էլ փակվել է գրքի տպագրության այս փուլը: Այն չի ամբողջացվել և որպես գիրք չի կազմվել մինչև 1843 թ. դեկտեմբերի 22-ը, քանի որ բացահայտվել է՝ «Նախաշաւիդ»-ի հրատարակությունը հակասում է դասագրքերի տպագրության վերաբերյալ պաշտոնական գրաքննությանը սահմանված 10-րդ և 11-րդ կետերին. մի բան, որ պետք է հաշվի առնեին նաև Արզանյանց եղբայրները: Ուրեմն՝ գրքի տարածումը վնաս կպատճառեր ինչպես հեղինակին, այնպես էլ տպարանատերերին:

Հեսսենմյուլլերի ձերբակալությունից հետո տնօրեն է նշանակվել Նիկոլայ Դեմենտևը, որը 1839 թ. փետրվարի 22-ին ղեկուցել է Երրորդ բաժանմունքի պետ կոմս Ալ. Բենկենդորֆին, որ Աբովյանը կազմել է մի քրեստոմատիա և հանձնել Թիֆլիսի գալստական դպրոցի տնօրինությանը³¹: Իր հովանավորի ձերբակալությունից հետո իս. Աբովյանը գրքի տպագրությունն ամբողջացնելու համար փորձել է ձեռք բերել պաշտոնական թույլտվություն³², հակառակ դեպքում, եթե անգամ այն ամբողջացներ ու կազմեր, չէր կարող որպես դասագիրք գործածել իր ուսումնարանում կամ ուսումնական այլ հաստատություններում:

Ալ. Բենկենդորֆը 1839 թ. հունիսի 13-ին գրություն է ուղարկել Ժողովրդական լուսավորության նախարար Սերգեյ Ուվարովին, ուր, ի թիվս այլևայլ տեղեկությունների, նշել է՝ իս. Աբովյանը թարգմանել և մշակել է պատանիների համար մի քանի օգտակար գրքեր, որոնք, սակայն, չի կարողացել հրատարա-

²⁸ Հ ա կ ո բ յ ա ն. 1987, 92:

²⁹ Տ է Ր Ա զ ա ր ե ա ն ց. 1861, 541:

³⁰ Ղ ա զ ա ր յ ա ն. 1979, 71:

³¹ Ղ ա զ ա ր յ ա ն. 1979, 73: Տե՛ս նաև Ռուսաստանի պատմության պետական արխիվ (այսուհետ՝ ՌԳՊԱ), ֆ. 733, ց. 82, գ. 42, թ. 17ա:

³² Բացառված չէ՝ Հեսսենմյուլլերի ձերբակալությունից և դրա շուրջ առաջացած աղմուկից հետո Արզանյանց եղբայրները նորահաստատ տպարանի գործունեությունը չփոխադրելու համար, պաշտոնապես գրավել են չեզոք գիրք: Նրանք չեն ցանկացել իրենց վրա վերցնել «Նախաշաւիդ»-ը գրաքննելու և տպագրությունն ամբողջացնելու պատասխանատվությունը: Մյուս կողմից, Դավիթ Արզանյանցը եղել է իս. Աբովյանի գործընկերը, մտերիմը և հետագա տարիներին ներքին կարգով փորձել է օգնել նրան գիրքը տպագրելու հարցում:

կել միջոցների պակասության պատճառով³³: Նա խնդրել է՝ հնարավորության դեպքում միջոցներ հատկացնել հեղինակին՝ այդ աշխատանքները տպագրելու համար: Գրությունն ի պատասխան՝ Ս. Ուվարովը 1839 հունիսի 22-ին հանձնարարել է Ալ. Բենկենդորֆին՝ Խ. Աբովյանի այդ գրքերի ձեռագրերն ուղարկել գրաքննական մարմնին՝ նախնական ուսումնասիրության և նշել գումարի այն չափը, որն ականկալում է ստանալ հեղինակը դրանց տպագրության համար³⁴: Միաժամանակ, ժողովրդական լուսավորության բաժանմունքի կառավարիչ կոմս Պատոն Շիրինսկի-Շախմատովը հանձնարարել էր Անդրկովկասի ուսումնարանների վերատեսուչ Վասիլևիչին, որ նախարարությունն ուղարկեն տպագրության ենթակա գրքերը և նշեն տպագրության համար անհրաժեշտ գումարի չափը³⁵:

Վերոնշյալ գրադրությունը համընկել է այն ժամանակահատվածին, երբ Կազանի համալսարանի նորաբաց հայագիտական ամբիոնում աշխատելու համար հայտարարվել է մրցույթ, որին մասնակցելու համար յուրաքանչյուր թեկնածու պետք է ներկայացներ գիտական նոր, դեռ չհրապարակված աշխատանք: Խ. Աբովյանից, սակայն, պահանջել են նրա բոլոր պատրաստի աշխատանքները:

1839 թ. հոկտեմբերի 9-ին ակադեմիկոս Բ. Ֆրենին գրած նամակում Խ. Աբովյանը նշել է, որ Սանկտ Պետերբուրգ է ուղարկում իր գրքերից երկուսի ձեռագրերը՝ «Տարերք արդի հայերէնի» (նկատի ունենալով «Նախաշաւիղ»-ը) և «Քերականութիւն ի պէտս հայ ժողովրդեան ըստ Տապալի» երկը³⁶: Վերջինիս գործածական լինելու վերաբերյալ հեղինակը կասկած չուներ, սակայն «Նախաշաւիղ»-ին կցել է գերմաներեն մի գրություն, քանի որ, ինչպես ինքն է ասում, «...յես ամբողջ գիշերներ եմ գոհել նրան» և անհանգստացած է, որ չեն հասկանա այն գրելու նպատակը³⁷: Այդ գրության մեջ նա բացատրել է «Նախաշաւիղ»-ի տպագրության կարևորությունը:

Հակառակ այս նամակի՝ Պ. Հակոբյանը պնդում է, որ Աբովյանն ուղարկել է «Նախաշաւիղ»-ի տպագիր տարբերակը, քանի որ գրքի տպագրությունը սկսվել էր 1838 թ. և այդ շրջանում հաստատ ավարտված պետք է լիներ: Գրականագետի այս մոտեցումը տեղին չէ, քանի որ այդ ժամանակ գիրքն ամբողջացված և կազմված չէր: Ընդհակառակը, գրքի ձեռագիրը Սանկտ Պետերբուրգ ուղարկելով Խ. Աբովյանը փորձում էր ստանալ նաև այն պաշտոնապես տպագրելու թույլտվություն³⁸:

Ձեռագրերը Պետերբուրգ են հասել 1840 թ. հունվարին, և անմիջապես արձանագրվել են մի շարք խախտումներ, որոնք հակասում են դասագրքերի տպագրության ընդհանուր օրենքներին ու պահանջներին³⁹: Այնուհետև

³³ Ղ ա գ ա Ր յ ա ն. 1974, 46–47, տե՛ս նաև ՌՊՊԱ, ֆ. 733, ց. 82, գ. 42, թ. 54:

³⁴ Ղ ա գ ա Ր յ ա ն. 1974, 47, տե՛ս նաև ՌՊՊԱ, ֆ. 733, ց. 82, գ. 42, թ. 52:

³⁵ Ղ ա գ ա Ր յ ա ն. 1974, 48, տե՛ս նաև ՌՊՊԱ, ֆ. 733, ց. 82, գ. 42, թ. 53, Շ ա հ ա գ ի գ. 1940, 208, 210:

³⁶ Շ ա հ ա գ ի գ. 1940, 117–118, տե՛ս նաև Ղ ա գ ա Ր յ ա ն. 1974, 48–49:

³⁷ Շ ա հ ա գ ի գ. 1940, 117:

³⁸ Ա բ ո վ յ ա ն. 1956, 493:

³⁹ Ղ ա գ ա Ր յ ա ն. 1974, 48–50, տե՛ս նաև ՌՊՊԱ, ֆ. 733, ց. 82, գ. 42, թ. 48–50:

դրանք գրաքննության են ուղարկվել Մարի Բրոսսերին, որի բացասական կարծիքը ստացվել է 1840 թ. մայիսին⁴⁰։ Երկարատև քննարկումներից հետո՝ 1841 թ. փետրվարին, ձեռագրերը, համապատասխան կից փաստաթղթերով, վերադարձվել են հեղինակին։ Ըստ որոշման՝ Խ. Աբովյանը պետք է վերանայեր Տապպեի օրինակով կազմած քերականությունը, իսկ «Նախաշաւիղ»-ի մասին ընդհանրապես խոսք չկար⁴¹։ Նույն որոշման մեջ շեշտվել է նաև, որ պետությունը չի կարող գումար տրամադրել Խ. Աբովյանին՝ որևէ գիրք հրատարակելու համար։

Խ. Աբովյանը 1840 թ. նոյեմբերի 1-ին էջմիածնի Սինոդի դատախազ Թովմա Ղորղանյանին գրած նամակում մի շարք հարցեր քննարկելուց հետո նշել է. «Յեթե Ձեր կողմից արված ե մի վորևե տնորինություն իմ գրքի մասին, խնդրում եմ տեղեկացնեք ինձ այն պատճառով, վոր գիրքը վաղուց արդեն պատրաստ ե»⁴²։ Այսինքն՝ Խ. Աբովյանը փորձել է աջակցություն գտնել Ս. էջմիածնում, սակայն պարզ չէ՝ ստացել է այդ աջակցությունը, թե՞ ոչ։

Առկա է Թիֆլիսի գիմնազիայի մանկավարժական խորհրդի 1843 թ. դեկտեմբերի 22-ի ժողովի արձանագրության պատճեն, երբ կրկին Թիֆլիսի գիմնազիայի մանկավարժական խորհրդում քննարկման է դրվել գիրքը տպագրելու հարցը⁴³։ Առաջին անգամ դրա քննարկումը տեղի էր ունեցել 1841 թ. հուլիսի 5-ին⁴⁴։ Գրախոսը գիմնազիայի ավագ ուսուցիչ, տպարանատեր Դ. Արզանյանցն էր, ով բացասական կարծիք է տվել՝ հետևյալ թերությունների ընդգծումով. ա) տառերի ընթերցանության տարօրինակ եղանակ, բ) հայոց ասացվածքների և Թիֆլիսի հայոց գերեզմանոցի մասին հոդվածի անհարկի առկայություն, որը կարող էր աշակերտների մոտ ծաղր առաջացնել։ Գրքի տպագրությունը հնարավոր կլիներ, եթե ուղղվեին այդ թերությունները։

Երկրորդ քննարկումը տեղի է ունեցել այն ժամանակ, երբ պաշտոնական ու հոգևոր գրաքննությունը վերջնականապես մերժել է գրքի տպագրությունը։ Կարծիքներ տվել են հայոց լեզվի ուսուցիչ Առաքել Արարատյանը և Դավիթ Արզանյանը։ Փաստաթղթի մեջ նշվել է, որ ուսուցիչ Աբովյանը կազմել է «Նախաշաւիղ» վերնագրով գիրք՝ հետևյալ կառուցվածով. ա) ընթերցողներին ուղղված առաջաբան, բ) խրատ՝ երեխաներին կարդալ-գրել սովորեցնելու համար, գ) տառերն ու վանկերը, դ) միավանկ, երկվանկ և բազմավանկ բառերը, պատմողական հոդվածներ, առակներ, առածներ, աղոթքներ, չափածո և արձակ երգեր, նկարագրություններ՝ մեծ մասամբ եվրոպական լեզուներից թարգմանված։

Ա. Արարատյանը մատնանշել է հետևյալ թերությունները. ա) հոդվածների խառը դասավորություն, բ) կարդալու և վանկեր կապելու օրինակների սակավություն, գ) ա տառի գործածություն օժանդակ բայի հետ, դ) մի քանի գրա-

⁴⁰ Շ ա հ ա գ ի գ . 1940, 321:

⁴¹ Ղ ա գ ա ը յ ա ն . 1974, 63–64, տե՛ս նաև ՌՊՊԱ, ֆ. 733, ց. 82, գ. 42, թ. 72–73:

⁴² Շ ա հ ա գ ի գ . 1940, 77: Ե. Շահազիզը սխալմամբ այս տողերը վերագրել է «Վերք Հայաստանի» վեպին, մինչդեռ «Երկերի ժողովածու»-ի մեջ Պ. Հակոբյանն ապացուցում է, որ խոսքը «Նախաշաւիղ»-ի մասին է (տե՛ս Ա թ ո վ ա ն . 1956, 78):

⁴³ Շ ա հ ա գ ի գ . 1940, 129–131:

⁴⁴ Շ ա հ ա գ ի գ . 1940, 130:

կան բառերի ու ոճերի անտեղի փոխարինում աշխարհիկ խոսակցական լեզվի բառերով, ե) 49-րդ էջում այնպիսի արտահայտությունների գործածություն, որոնք պարունակում են ժողովրդական ծաղրանք, գ) 9-րդ էջում մի քանի բառերի անկանոն տրոհում:

Դասագրքի երկրորդ քննարկման արձանագրությունից պարզ է դառնում, որ Դ. Արզանյանցն իր նախորդ դիտողություններին չի անդրադարձել և չի նշել՝ արդյոք դրանք ուղղվե՞լ են, թե՞ ոչ: Նա միայն ընդգծել է, որ իմ Աբովյանի ձեռագիր գիրքը⁴⁵ գրված Երևանի աշխարհիկ բարբառով, կարող է շահեկան ձեռնարկ համարվել հենց Երևանի գավառական դպրոցների համար:

Ելնելով այս ամենից՝ մանկավարժական խորհուրդն որոշել է, որ գրքի տպագրությունն ու տարածումը հնարավոր կլինի, եթե՞ ա) հեղինակն ուղղի նկատված թերությունները, բ) չհակասի գրաքննության կանոններին:

Այսինքն՝ իմ Աբովյանը ստացել է պաշտոնական մերժում, ըստ որի՝

1. քննարկման ներկայացրած գրքի ձեռագիր օրինակի կառուցվածքը համընկնում է առկա երկու տպագիր օրինակների կառուցվածքի հետ:

2. 1841 թ. հուլիսի 5-ի քննարկման ժամանակ նշված թերություններն ուղղված են մասնակի: Տպագիր օրինակներում պահպանվել են ասացվածքները, սակայն բացակայում է Թիֆլիսի հայոց գերեզմանոցի մասին հոդվածը: Նշանակում է՝ իմ Աբովյանը երկրորդ քննարկմանը ձեռագիրը ներկայացրել է մասնակի փոփոխությամբ:

3. 1843 թ. դեկտեմբերի 22-ի քննարկման ժամանակ նշված թերություններին իմ Աբովյանն այլևս չի անդրադարձել և որևէ փոփոխություն չի արել դասագրքում, հավանաբար, այն պատճառով, որ հուսախաբ է եղել, թե գրքի տպագրությունը կթույլատրեն:

Թիֆլիսի գիմնադրայի մանկավարժական խորհրդի արձանագրությունն ուղարկվել է Անդրկովկասի դպրոցների վերատեսուչ Իվան Կուլժինսկուն, ով արձանագրության պատճեն ձեռագրի հետ վերադարձրել է իմ Աբովյանին 1844 թ. փետրվարի 19-ին՝ նշելով, որ եթե թերությունները վերացնի, ապա պետք է նորից ներկայացնի իրեն՝ դրա հետագա ճակատագիրը տնօրինելու համար⁴⁶: Փաստաթուղթը իմ Աբովյանը ստացել է մարտի 1-ին⁴⁷:

Վերոնշյալից կարելի է ենթադրել, որ «Նախաշաւիղ»-ի պաշտոնական տպագրությունը չի թույլատրվել մինչև 1843 թ. դեկտեմբեր:

Ըստ Պ. Հակոբյանի «Նախաշաւիղ»-ը տպագրվել է 1838 թ., իսկ մինչև 1843 թ. քննարկման թեմա է դարձել նրա ձեռագիրը: Այսինքն՝ տպագիր գիրքը նախորդել է ձեռագրին: Ավելին, Սանկտ Պետերբուրգ գրաքննության ուղարկվել է հենց տպագիր տարբերակը⁴⁸: Այս վարկածը, սակայն, վիճարկելի է, քանի որ վերոնշյալ պատճառներով գրքի տարածումը վնաս կպատճառեր և՛ իմ Աբովյանին, և՛ Արզանյանց եղբայրներին: Գրքի առաջին 18 մամուլը իսկապես

⁴⁵ Գիրքն այդ ժամանակ արդեն տպագրված էր, սակայն այդ մասին բարձրաձայնել Դ. Արզանյանցը չէր կարող:

⁴⁶ Շ ա հ ա զ ի գ. 1940, 131:

⁴⁷ Հ ա կ ո բ յ ա ն. 1987, 92:

⁴⁸ Հ ա կ ո բ յ ա ն. 1952, 171:

տպագրվել է 1838 թ., սակայն այն որպես գիրք չի կազմվել ու չի տարածվել:

Գրքի տպագրությունը փորձել են ավարտել 1844 թ. սկզբին: Ներկայացնենք հետևյալ փաստերը.

1. «Նախաշաւիղ»-ի 93-րդ էջում (նկ. 6) օգտագործվել է մի զարդանախշ, որն առկա է նաև 1842 թ. «Կանոնք գործածական» գրքում (նկ. 7)⁴⁹: Մինչ այդ Արզանյանց տպարանում տպագրված գրքերում այս զարդանախշը չի գործածվել: Հավանական է, որ տպարանն այն կարող էր գործածել նաև 1844 թ. սկզբին:



Նկ. 6:



Նկ. 7:

2. Խ. Աբովյանը Թիֆլիսի գեմնագիտայի մանկավարժական խորհրդի 1843 թ. դեկտեմբերի մերժման գրավոր հաստատումը ստացել է 1844 թ. մարտի 1-ին⁵⁰, որից հետո միայն նոր կարող էր ձեռնամուխ լինել գրքի տպագրությունն ավարտելու գործին:

Խ. Աբովյանը 1843 թ. հունիսի 19-ին նշանակվել է Երևանի գավառական դպրոցի տեսուչ⁵¹, իսկ տեղափոխվել է օգոստոսին⁵²: Մինչև 1844 թ. ապրիլի 27-ը նա պաշտոնի բերումով այցելել է Թիֆլիս՝ ինչպես փաստում են Ներսես Տեր-Կարապետյանը⁵³ և Պիոն Հակոբյանը⁵⁴: Վերջինիս կարծիքով նա հանդիպումներ է ունեցել Արզանյանց եղբայրների հետ և սկսել է գրքի տպագրությունը, սակայն երկու մամուլ տպագրելուց հետո այն նորից ընդհատվել է⁵⁵:

3. Գրքի վերջին հատվածում ներառվել է «Այբ, բարեկամութիւն» չափածո ստեղծագործությունը, որի գլխավոր հերոսն Աղասին է: Ֆ. Բողենշտեդին ուղարկած տետրակում Խ. Աբովյանը խոստովանել է, որ Աղասու կերպարը և թեման իրեն հետաքրքրել են դեռևս մասնավոր ուսումնարանում դասավանդելու տարիներին⁵⁶: Նա նշել է, որ իր պատմությունը սկսել է 1841 թ. «Բարեկենդանին», իսկ առաջին տետրակներն էլ կարդացել է աշակերտների համար: Ըստ Աբովյանի աշակերտների հուշերի՝ վարժապետն իրենց համար կարդացել

⁴⁹ Տէր Ղ ու կ ա ս ե ա ն . 1842, 8, 12, 18:

⁵⁰ Հ ա կ ո բ յ ա ն . 1987, 92:

⁵¹ Մ. Տեր Աղաբյանցը նշում է, որ Խ. Աբովյանը Երևան է տեղափոխվել 1843 թ. հունիսի 9-ին (տե՛ս Տ է Ր Ա գ ա ր ե ա ն ց . 1861, 541):

⁵² Շ ա հ ա գ ի գ . 1940, 122:

⁵³ Տ է Ր Կ ա ր ա պ ե տ ե ա ն . 1897, 96:

⁵⁴ Հ ա կ ո բ յ ա ն . 1987, 92:

⁵⁵ Հ ա կ ո բ յ ա ն . 1987, 92:

⁵⁶ Ա բ ո վ յ ա ն . 1956, 390–391:

է Աղասու պատմությունը հատված-հատված⁵⁷: Հայտնի է, որ «Վերք Հայաստանի» վեպը մեծ լուսավորիչը սկսել է գրել 1841 թ., սակայն թեմայի վրա աշխատել է բավական երկար⁵⁸: Այսինքն կարելի է ենթադրել, որ «Նախաշաւիղ»-ի մեջ Աղասու հատվածը ներառվել է 1841 թ. կամ ավելի ուշ:

«Նախաշաւիղ»-ը և Արզանյանց եղբայրների տպարանը

XIX դ. սկզբին Թիֆլիսում հայկական տպագրությունը դեռ նոր էր ձևավորվել և չունեւ տպագրական այն որակը, ինչը կար Վենետիկում, Վիեննայում, Վաղարշապատում ու այլ վայրերում: Գործում էր երկու տպարան՝ Ներսիսյան դպրոցինը և Արզանյանց եղբայրներինը, և իս. Աբովյանի գիրքը պետք է տպագրվեր այս երկու տպարաններից որեւէ մեկում: Համադրելով փաստերը՝ եկել ենք այն համոզման, որ «Նախաշաւիղ»-ը տպագրվել է Դավիթ և Հակոբ Արզանյանց եղբայրների տպարանում: Եվ այսպես.

1. 1830–1841 թթ. Ներսիսյան դպրոցի տպարանում որեւէ գիրք չի տպագրվել, իսկ 1841–1850 թթ. հրատարակված գրքերի քանակը շատ քիչ է: Տպարանի գործունեությունն ակտիվացել է 1850-ական թվականներից հետո⁵⁹: Արզանյանց եղբայրների տպարանը գործել է 1838-ից մինչև 1844 թվականի սկիզբը:

Արզանյանց եղբայրներին Թիֆլիսում տպարան բացելու թույլտվություն տալու գրությունը Ժողովրդական լուսավորության նախարարին ուղարկվել է 1837 թ. մայիսի 20-ին: Ըստ այս փաստաթղթի՝ Թիֆլիսում տպարան հիմնադրելու ցանկությունն առաջացել է այն բանից հետո, երբ Սանկտ Պետերբուրգում Կովկասի դպրոցների համար նախատեսված դասագիրքը տպագրելու փորձերը ձախողվել են: Արզանյանց նորաստեղծ տպարանում պետք է տպագրվեին հիմնականում դասագրքեր, որոնք համապատասխան կլինեին Անդրկովկասի ուսումնարանների կանոնադրության 10-րդ և 11-րդ կետերին⁶⁰: Տեղում դասագրքերի տպագրության կազմակերպումը կհնչեցանքներ դրանց առաջ տարածմանը: Գրության մեջ նշվել է, որ տպարանը հիմնադրելու էին Արզանյանց եղբայրները, ովքեր հոգալու էին Ֆինանսական բոլոր ծախսերը⁶¹:

1837 թ. հուլիսի 20-ին Արզանյանց եղբայրները ստացել են Ներքին գործերի նախարարի արտոնությունը⁶², իսկ 1837 թ. դեկտեմբերի 22-ին՝ Ժողովրդական լուսավորության նախարարության թույլտվությունը՝ հավելումով, որ թույլատրվում է նաև տեղում իրականացնել արևելյան լեզուներով տպագրվող գրքերի գրաքննությունը⁶³: Փաստաթղթում սա պատճառաբանվում էր հետևյալ կերպ. Թիֆլիսում չկար արևելյան լեզուներով տպագրվող գրքերի

⁵⁷ Մ ու Ր ա դ յ ա ն . 1941, 113:

⁵⁸ Հ ա կ ո բ յ ա ն . 1955թ:

⁵⁹ Մ ա դ ա լ յ ա ն . 2013, 66–71:

⁶⁰ Сборник. 1864, 685–686.

⁶¹ ՌՊՊԱ, ֆ. 733, ց. 82, գ. 48, թ. 1–2: Արզանյանց եղբայրների տպարանին վերաբերող վավերագրերի պատճենները, որոնք գտնվում են Ռուսաստանի պատմության պետական արխիվում, մեզ տրամադրել է պ. գ. թ. Ստյոպա Պետոյանը, ում հայտնում ենք մեր շնորհակալությունը:

⁶² ՌՊՊԱ, ֆ. 733, ց. 82, գ. 48, թ. 4:

⁶³ ՌՊՊԱ, ֆ. 733, ց. 82, գ. 48, թ. 7–9:

գրաքննական կոմիտե կամ լիազորված անձ, ինչը լրացուցիչ խնդիրներ էր ստեղծում այդ լեզուներով գրքերի, հատկապես՝ դասագրքերի տպագրության համար: Ահա՛ ինչու Արզանյանց եղբայրները խնդրել են, որ այդ լեզուներով գրքերի տպագրությունն իրականացվի իրենց անմիջական հսկողությամբ՝ համապատասխան Անդրկովկասի ուսումնարանների կանոնադրության 10-րդ և 11-րդ կետերի: Առաջարկը հաստատվել է Ժողովրդական լուսավորության նախարար Ս. Ուլարովի կողմից:

Վերոնշյալ փաստաթղթերը հաստատում են, որ արդեն 1837 թ. դեկտեմբերի 22-ից տպարանը պատրաստ էր սկսել տպագրական գործունեությունը, և իս. Աբովյանի «Նախաշաւիդ»-ը տպարանի առաջին հրատարակություններից մեկն էր լինելու:


2. Տպարանատերերից Դ. Արզանյանցը, ինչպես նշվեց, Թիֆլիսի գիմնազիայի ավագ ուսուցիչներից էր, անձամբ ծանոթ էր իս. Աբովյանին և նրա ձեռնարկին: Նորահաստատ տպարանը, բնականաբար, կստանձնեք գործընկերոջ գրքի՝ «Նախաշաւիդ»-ի տպագրությունը, մանավանդ առկա էր Թիֆլիսի ուսումնարանների վերատեսուչ Հասանմյուլլերի արտոնությունը, իսկ գրաքննության հարցը ինքնին լուծված էր (Դ. Արզանյանցին տրված էր գրաքննելու արտոնություն): Արզանյանց եղբայրները, սակայն, խախտել են Անդրկովկասի ուսումնարանների կանոնադրության 10-րդ կետը, ըստ որի՝ հայոց լեզվի ձեռնարկ կարող էր կազմել միայն այդ առարկան դասավանդող ուսուցիչը, մինչդեռ իս. Աբովյանը Թիֆլիսի գիմնազիայում հայոց լեզվի ուսուցիչ չի եղել:

3. Պ. Հակոբյանը «Նախաշաւիդ»-ի տպագիր օրինակների սկզբի ու վերջի համեմատության արդյունքում եզրակացրել է, որ նոտրգրերն ու մեծատառերը նույն տպարանին են պատկանում, մինչդեռ սովորական տառատեսակներն ակնհայտ տարբերություններ ունեն⁶⁴: Դրանք նման չեն անգամ Ներսիսյան դպրոցի և մի շարք այլ տպարաններում գործածված տառերին: Ըստ նրա՝ Աբովյանի կենդանության օրոք նման տառերով մեկ այլ գիրք չի շարվել Թիֆլիսում և Անդրկովկասի այլ վայրերում գործող հայկական տպարաններում: Ուրեմն՝ այդ էջերը կամ Աբովյանն է հատուկ պատվիրել այլ քաղաքներում՝ Մոսկվա, Նախիջևան, Սանկտ Պետերբուրգ, կամ Աբովյանի ցանկությանմբ այդ տառերն Արզանյանց եղբայրները ձեռք են բերել հաջորդ տարիներին և ամբողջացրել գիրքը: Հակոբյանը չի բացառում, որ այդ էջերը լրացվել են իս. Աբովյանի մահից հետո:

Վարկածը, որ իս. Աբովյանն այդ էջերի մի մասը տպել է Թիֆլիսում (նոտրգրերն ու մեծատառերը), իսկ մյուս մասը՝ այլ տպարանում կամ այլ վայրում (սովորական տառատեսակները), հավանական չէ, քանի որ նախ իս. Աբովյանն այդ շրջանում չունեւ այդպիսի մեծ հնարավորություններ, երկրորդ՝ հնարավոր չէր նույն էջի մի մասը տպագրել մի տպարանում, մյուս մասը՝ այլ տպարանում: Տպարանը չէր կարող դրանք 1844 թվականից հետո պատվիրել, քանի որ դադարել էր գործել: իս. Աբովյանի մահից հետո տպագրելու վարկածը ևս հերքվում է, քանի որ իր կենդանության օրոք գրքի որոշ օրինակներ հեղինակը բաժանել է:

⁶⁴ Հ ա կ ո բ յ ա ն . 1987, 91:


Համեմատելով տարբեր էջերի սովորական տառատեսակները՝ կարելի է եզրակացնել, որ դրանք բոլորը պատկանում են Արզանյանց տպարանին: Ոչ թե տառատեսակն է տարբեր, այլ թանաքն է մուգ կամ բաց, տառաչափը՝ տարբեր: Որպես օրինակ՝ ներկայացնենք 2-րդ (նկ. 8), 16-րդ (նկ. 9), 54-րդ (նկ. 10), 74-րդ (նկ. 11) էջերում տպագրված զ տառը:




Նկ. 8:



Նկ. 9:



Նկ. 10:



Նկ. 11:

4. Մ. Տեր Ազարյանցը վկայում է, որ տպագրությունն «անպիտան» է եղել⁶⁵: Սա բացատրվում է նրանով, որ «Նախաշաւիղ»-ը տպարանի առաջին արտադրանքներից է: Գրքի վերջին մամուլների տպագրության որակը Համեմատաբար բարձր է:

5. Պաշտպանվել են Պերճ Պոռչյանի հուշերը Խ. Աբովյանի մասին, որին հանդիպել է իր ծննդավայրի ծխական դպրոցում սովորելու տարիներին⁶⁶: Խ. Աբովյանն Աշտարակի Շապուհ Շահնազարյանի դպրոց այցելել է 1846 թ.⁶⁷ և 3 օր մնացել է այնտեղ՝ չփվելով երեխաների հետ: Չորրորդ օրը՝ հրաժեշտի պահին, նա Շահնազարյանին խոստացել է ուղարկել մի գիրք, որով խորհուրդ է տվել կազմակերպել ուսուցումը: Խոստումն իրականացրել է մի քանի օր անց, նա ուղարկել է գրքի մի քանի օրինակներ՝ մեկը ուսուցչի համար, մյուսները՝ աշակերտներին: Պ. Պոռչյանը հիշում է, որ դա Արզանյանց տպարանում տպված «Նախաշաւիղ»-ն էր: Նա ընդգծում է, որ տարբերություններ կան այս և երկրորդ՝ 1862 թ. տպագրության միջև: Պոռչյանը կարևորում է հատկապես առաջին տպագրության առաջաբանը՝ նշելով. «Յառաջաբանից երևում է, որ Աբովյանցն է առաջին անգամ սկսել մեր մէջ հնչական մետոդան՝ դեռ 40 թուականներումը»: Ինչպես ինքն է գրում, հետագայում գիրքը կորցրել է և չի կարողացել առանձին հրատարակել առաջաբանը:

«Նախաշաւիղ»-ը տպագրվել է սահմանափակ տպաքանակով և ներքին կարգով օգտագործելու նպատակով: Չստանալով պետական մարմինների աջակցությունը և տպագրելով ներքին համաձայնությամբ՝ դասագիրքը չէր կարող մեծ տպաքանակ ունենալ, հակառակ դեպքում վերահսկիչ մարմիններն անմիջապես կձեռնարկեին համապատասխան միջոցներ:

1928 թ. Երվանդ Շահազիզն առաջ է քաշել գրքի տպաքանակն այրելու վարկածը⁶⁸՝ հավելելով, որ Խ. Աբովյանը չի ընդունել գրքին վերագրված դիտողությունները, ինչի պատճառով այն մնացել է անավարտ: Հետո փորձել է ինքնուրույն տպագրել, բայց դրա օրինակները չեն տարածվել կամ վատ որակի տպագրության, կամ Վիրահայոց թեմակալ առաջնորդ Կարապետ արք. Բագրատունու հրամանով, ով հրահանգել է օրինակները հավաքել և այրել՝ իբրև աշխարհաբար գրված ձեռնարկ: Ե. Շահազիզն այրելու վարկածը հիմնա-

⁶⁵ Տ է Ր Ա զ ա Ր ե ա ն ց. 1861, 541:

⁶⁶ Պ ո շ ե ա ն ց. 1889, 3, Պ ո շ ե ա ն ց. 1894, 13–21:

⁶⁷ Պ ո շ ե ա ն ց. 1889, 20:

⁶⁸ Շ ա հ ա զ ի զ. 1928, 139:

վորել է՝ վկայակոչելով Ղազարոս Աղայանի մոտ պահպանված դասագրքի օրինակ՝ կից ձեռագիր բացատրական թղթով⁶⁹։ Ռուբեն Զարյանը, սակայն, անդրադառնալով նույն թղթին ընդգծել է, որ այդտեղ այրելու մասին խոսք չկա⁷⁰։

Այս վարկածը հերքվում է, քանի որ Խ. Աբովյանը հետագա տարիներին գրքի օրինակները բաժանել է մասնավոր անձանց, որոնցից երկուսը հասել է մեզ։ Ուրեմն, հավանական է, որ տպաքանակը կամ դրա մի մասը եղել է իր մոտ։ Բացի այդ, «Ուղեւորութիւն դէպի Անիի աւերակները» գործում (1847 թ.) նա նշում է, որ իր երկը՝ «Ընթերցարան ժողովրդական ուսումնարանների համար» («Նախաշաւիղ» – Մ. Գ.)», «... նույնիսկ տպագրված է, բայց տասը տարի է, ինչ առանց գործածելու անօգուտ ընկած է ... Հենց միայն նրա համար, որ Թիֆլիսի գիմնազիայի խորհուրդը ... գիրքը բաց չի թողնում, նրա համար, որ գրված է հասարակ ժողովրդին ընդհանուրին հասկանալի լեզվով։ Այդ գրքերը փտում են փոշու մեջ»⁷¹։ Եթե տպաքանակն այրված լիներ, այդ մասին հեղինակն անպայման կասեր։ Ավելին, գրքի չտարածվելու մեջ նա մեղադրում է միայն իշխանություններին. ոչ մի խոսք չկա Կարապետ արք. Բագրատունու մասին։

Գրքի մեզ հայտնի առաջին օրինակը հայտնաբերվել է Արտաշես Աբեղյանի ջանքերով 1925 թ. ԳԱԹ-ում՝ Ղ. Աղայանի արխիվում։ Ըստ Ե. Շահազիզի՝ սա այն օրինակն է, որի մասին խոսել է Մ. Տեր-Ազարյանը⁷²։ Հիշյալ օրինակի մեջ առկա է երկու գրություն։ Մի գրության ներքևում Ա. Աբեղյանի նշումն է, որ սա Ղ. Աղայանի ձեռագիրն է, իսկ երկրորդ գրության մեջ գրքի վերնագիրը և մի բացատրություն, որ օրինակը պակասավոր է։ Բացի երկու գրություններից, պահպանվել է բացատրական ևս մի թուղթ⁷³, որը փաստում է գրքի հրատարակված լինելը⁷⁴։ Ղ. Աղայանի օրինակի առաջին 15 էջերը տպագրվել են 1912 թ. Թիֆլիսի «Հորիզոն» թերթում Ա. Աբեղյանի առաջաբանով⁷⁵, իսկ գիրքը ի պահ են տվել Հովհաննես Թումանյանին։ 1922 թ. Մուշեղ Աղայանն այն փոխանցել է ԳԱԹ-ին⁷⁶։

ՄՄ-ի օրինակը, ինչպես նշված է գրքի վրա, 1863 թ. պատկանել է վաղարշապատցի Սահակ Խաչատուրյան Սահակյանցին, ով, հնարավոր է, եղել է Աբովյանի աշակերտներից։ Գիրքը ՄՄ մուտք է գործել 1930 թ.⁷⁷։ Առաջին էջին կա սև թանաքով նշում. «Ընթերցարան մայրենի լեզվուի, գրաբարախառն և երևանի բարբառով (հաւանորէն Խաչ. Աբովեանի կազմած)», որը, ըստ Պ. Հակոբյանի, պատկանել է բանասեր Սարգիս Քամայկյանցին⁷⁸։ Դրանից ներքև նշված է «Խ. Աբովյան, Նախաշաւիղ, 1862, Թիֆլիս», իսկ կողքը գրված

⁶⁹ Ղ. Աղայանի բացատրական թուղթը վերարտադրվել է «Նախաշաւիղ»-ի 1940 թ. տպագրության առաջաբանում (Աբովյան. 1940, LXVIII–LXIX)։

⁷⁰ Աբովյան. 1940, LXX։

⁷¹ Աբովյան. 1956, 195–196։

⁷² Շահազիզ. 1928, 138, Աբովյան. 1940, LXVIII։

⁷³ Աբովյան. 1940, LXVIII–LXIX։

⁷⁴ Պ. Հակոբյանը նշում է, որ Ղ. Աղայանի ձեռագիր թուղթը կորել է։ Մեզ է հասել գրողի որդու՝ Մուշեղ Աղայանի արտագրած բնագիրը և նույնի մեքենագիր տարբերակը (տե՛ս Հակոբյան. 1987, 87)։

⁷⁵ Աբեղյան. 1912, 2–3։

⁷⁶ Հակոբյան. 1987, 87, Աղայան. 1922, 3։

⁷⁷ Հակոբյան. 1987, 89։

⁷⁸ Հակոբյան. 1987, 89։

է Էջմիածնի գիտական ինստիտուտի մատենադարանապետ Սենեքերիմ Տեր-Հակոբյանի ստորագրութիւնը: Հիշյալ օրինակի «1862, Թիֆլիս» բառերի վրա գիծ է քաշվել, իսկ գուգահեռ էջին ավելացվել են գրքի մատենագիտական տվյալները: Շապիկին հաջորդող էջին էլ թանաքով նշված է «1838»: Հնարավոր է՝ գիրքը գտնվել է Մայր Աթոռի Մատենադարանում, որտեղից էլ փոխանցվել է Սարգիս Քամալյանին:

Եզրակացություն

Այսպիսով՝ Խ. Աբովյանի «Նախաշաւիղ»-ը գրվել է 1836 թ. մինչև 1838 թ. սկզբին ընկած ժամանակահատվածում՝ առաջին հերթին հեղինակի հիմնադրած մասնավոր ուսումնարանում գործածելու նպատակով: Գիրքը տպարան մուտք է գործել 1838-ի սկզբին, երբ Արզանյանց եղբայրները պաշտոնապես սկսել են իրենց տպագրական գործունեությունը Թիֆլիսում: Առաջին 18 մամուլը տպագրվել է հենց այս շրջանում, մինչև հեղինակի հովանավոր Հեսսենմյուլլերի մասին առաջին ահազանգի ստացումը: Վերջինիս ձեռքակալությունից հետո Խ. Աբովյանը փորձել է ստանալ գրքի տպագրության պաշտոնական թույլտվություն և աջակցություն, սակայն մերժումներ է ստացել տարբեր հանձնաժողովների և գրախոսների կողմից: Տպագրությունն ավարտել և գիրքը հեղինակին են փոխանցել 1844 թ. սկզբին՝ մինչև ապրիլ ամիսը: «Նախաշաւիղ»-ը տպագրվել է Թիֆլիսի Արզանյանց եղբայրների տպարանում: Ներքինյան դպրոցում կամ այլ տպարանում տպագրելու վարկածը հերքվում է: Այն որպես դասագիրք չի գործածվել, օրինակները պահպանվել են հեղինակի մոտ, որոնք նա բաժանել է մասնավոր անձանց: Պահպանվել է գրքի երկու օրինակ՝ Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում և Եղիշե Զաբենցի անվան գրականության և արվեստի թանգարանում:

Մայա Գրիգորյան — Բ. Գ. Թ., ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի տնօրեն, Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ թանգարանագիտություն, գրադարանագիտություն և մատենագիտություն ամբիոնի դասախոս: Գիտական հետաքրքրություններ՝ XIX–XX դդ. հայ գրականություն, հայ տպագրություն, մատենագիտություն ավստրիական: Հեղինակ է 52 հոդվածի: ORCID:0000-0002-7989-0514. m.grigoryan@sci.am

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբեղեան Ա. 1912, Խաչատուր Աբովեանից մի էջ.— «Հորիզոն» (Թիֆլիս), 16. VI. 1912:

Աբովյան Խ. 1940, Նախաշաւիղ կրթութեան ի պետս նորավարժից, լուսատիպ նմանահանություն, առաջ. և ծանոթ.՝ Ռ. Զարյանի, Երևան, ՀԽՍՀ պետական հրատ., ժՁ, 72, XCIX էջ:

Աբովյան Խ. 1956, Երկերի լիակատար ժողովածու ութ հատորով, հ. 7, աշխատասիրությամբ՝ Պ. Հակոբյանի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 524 էջ:

Աղայան Մ. 1922, Նոր ուղղագրության պատմության ակտը.— «Խորհրդային Հայաստան», 02. IV. 1922:

Այբբենարան Հայոց ի պետս նորուսումն մանկանց. 1838, Տիֆլիս, տպ. 3. և Դ. Արզանեանց, 30 էջ:

Արզանեանց 3 եւ Դ. 1840, Քերականութիւն հայ. համառօտ, Տիֆլիս, տպ. Արզանեանց, 276 էջ:

Բաբայան Ա. 1952, «Նախաշավիղի» պատմության շուրջը.– «Գրական թերթ», 01. I. 1952:

Դավթյան Հ. 1967, Հայ գիրքը 1801–1850 թվականներին. Մատենագիտություն, Երևան, Ա. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարան, 536 էջ:

Դարաստան հատուկտիր գրուածոց հայ մատենագրաց ի պէտս մատենագրութեան ի հայոց լեզուէ ի ռուս. 1838, Տփլիս, տպ. Յ. և Դ. Արզանեանց, 251 էջ:

Երիցեան Ա. 1894, Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը եւ Կովկասի հայք XIX դարում, հ. Բ. Կաթողիկոսութիւն Տ. Յովհաննէս VII Կարբեցւոյ եւ «Պօլօժնիէ» (1831–1842), Թիֆլիզ, տպ. Մ. Մարիտրոսեանի եւ ընկ., 592 էջ:

Ջարբիանալեան Գ. 1883, Հայկական մատենագիտութիւն, Վենետիկ, տպ. Մխիթարեան, 734 էջ:

Կրթութիւն աւետարանական ի պէտս Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ. 1839, Տփլիս, տպ. Յ. և Դ. Արզանեանց, 40 էջ:

Հակոբյան Պ. 1952, Խ. Աբովյանի «Նախաշավիղի»-ի տպագրման թվականը.– «Սովետական գրականություն և արվեստ», № 7, էջ 164–171:

Հակոբյան Պ. 1955ա, Անծանոթ էջեր Խաչատուր Աբովյանի կյանքից և մանկավարժական գործունեությունից.– «Սովետական մանկավարժ», № 1, էջ 44–52:

Հակոբյան Պ. 1955բ, Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի ստեղծագործական պատմությունը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ, 253 էջ:

Հակոբյան Պ. 1987, «Նախաշավիղի» կորած էջերից.– «Բանբեր Երևանի համալսարանի», № 3, էջ 86–107:

Ղազարյան Վ. 1974, Խաչատուր Աբովյանի գործը (արխիվային փաստաթղթեր), առաջ. ծանոթ. և հրապ.՝ Վ. Ղազարյանի.– «Բանբեր Հայաստանի արխիվների», № 3, էջ 39–74:

Ղազարյան Վ. 1979, Խաչատուր Աբովյան: Հասարակական գործունեությունը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 288 էջ:

Ղազիկեան Ա. 1909, Հայկական նոր մատենագիտութիւն եւ հանրագիտարան հայ կեանքի, հ. Ա, Վենետիկ, տպ. Սրբոյն Ղազարու, 2080 էջ:

Մաղալյան Վ. 2013, Հայկական գրատպությունը Թիֆլիսում (XIX դար–XX դարասկիզբ).– ՊԲՀ, № 3, էջ 62–83:

Մուրադյան Հ. 1941, Ժամանակակիցները Խաչատուր Աբովյանի մասին, Երևան, Արմֆան, 127 էջ:

Շահազիզ Ե. 1928, Խաչատուր Աբովյանը (Յերեվանի գավառական դպրոցի տեսչության 1843–1848 թթ. թղթերի յեվ ակադեմիկոս Ֆրենի նամակների հիմունքով: Կարդացված ե պատմական-հասարակական բաժնում 1928 թվի հունվ. 28 յեվ փետր. 25 նիստերում).– «Տեղեկագիր գիտության և արվեստի ինստիտուտի», № 3, էջ 119–167:

Շահազիզ Ե. 1940, Դիվան Խաչատուր Աբովյանի, հ. 1, Երևան, Արմֆան, 369 էջ:

Շահազիզ Ե. 1948, Դիվան Խաչատուր Աբովյանի, հ. 2, Երևան, ՀՍՍՌ ԳԱ, 1948, 279 էջ:

Պետոյան Ս. 2020ա, Նոր փաստեր Շուշիում տպագրված առաջին գրքերի մասին.– «Բանբեր Մատենադարանի», № 30, էջ 302–316:

Պետոյան Ս. 2020բ, Բազելյան բողոքական քարոզիչների՝ Շուշիում հիմնադրած տպարանի պատմությունը (1837–1835 թթ.).– «Հայագիտության հարցեր», № 1, էջ 45–65:

Պետոյան Ս. 2021, Բաղդասար արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանցը և Շուշիի հայկական տպագրությունը, մասն Ա.– «Էջմիածին», թիվ Է, էջ 88–102:

Պռօշեանց Պ. 1889, Գիւղական վարժապետներ.– «Արծազանք» (Թիֆլիս), 22. II. 1889:

Պռոշեանց. 1894, Պռոշեանց Պ., Յուշիկներ, Ա. շրջան, Թիֆլիս, տպ. Մ. Վարդանեանցի, 271 էջ:

Սևակ Գ. 1952, Խ. Աբովյանի «Նախաշավիղի» մի նորահայտ օրինակ.– «Գրական թերթ», 01. I. 1952:

Տէր Ազարեանց Մ. 1861, Մէկ քանի խօսք Ապովեանի վերայ (քանի մը նիւթ նրա կենսագրութեան համար).– «Կռունկ հայոց աշխարհին» (Թիֆլիս), թիվ 7, էջ 531–553:

Տէր Կարապետեան Ն. 1897, Խաչատուր Աբովեան, Տիֆլիս, տպ. Շարածէ եւ ընկ., 141 էջ:

Տէր Ղուկասեան Ե. 1842, Կանոնք գործածականք, Տիֆլիս, տպ. Յ. և Դ. Արզանեանց, 1842, 25 էջ:

Ռուսաստանի պատմության պետական արխիվ, ֆ. 733, ց. 82, գ. 42, 48:

Сборник постановлений по Министерству народного просвещения, т. 2. Царствование Николая I. 1825–1855, Отделение 1. СПб., Тип. Императорской Академии наук, 1864, 1224, 62, 42 (=1328) с.

О ПЕЧАТАНИИ КНИГИ ХАЧАТУРА АБОВЯНА «ПРЕДТРОПЬЕ» («НАХАШАВИХ»)

МАЙЯ ГРИГОРЯН

Резюме

Ключевые слова: Х. Абовян, XIX век, Тифлис, «Предтропье» («Нахашавих»), братья Арзаянцы, библиография, цензура, история армянского книгопечатания, типография.

Учебник выдающегося армянского писателя, просветителя, педагога, общественного деятеля Х. Абовяна (1809–1848) «Предтропье» («Нахашавих») был написан с 1836-го до начала 1838 г. с целью применения в частной школе, основанной автором. Книга поступила в типографию братьев Арзаянцев в начале 1838 г., когда они официально начали свою типографскую деятельность. В этот период были напечатаны 18 печатных листов, прежде чем было получено первое предупреждение о покровителе Абовяна – инспекторе училищ Тифлиса Гессенмюллере. Книга в тот период не была составлена и распространена. После ареста Гессенмюллера Х. Абовян пытался получить официальное разрешение и поддержку для печатания книги, но она была несколько раз отклонена различными комиссиями и рецензентами. Тираж был напечатан и передан автору в начале 1844 г., до месяца апреля.

«Предтропье» было напечатано в типографии братьев Арзаянцев в Тифлисе. Гипотеза о печатании книги в школе Нерсисян или другой типографии опровергается. В качестве учебника она не использовалась, экземпляры остались у автора и раздавались частным лицам. Сохранилось два экземпляра книги: один – в Матенадаране им. Маштоца, другой – в Музее литературы и искусства им. Егише Чаренца РА.

Майя Григорян – к. филол. н., директор Фундаментальной научной библиотеки НАН РА, преподаватель кафедры музейного дела, библиографии АГПУ им. Х. Абовяна. Научные интересы: история армянской литературы, армянской печати и библиографии XIX–XX вв. Автор 52 статей. ORCID:0000-0002-7989-0514. m.grigoryan@sci.am

ON THE ISSUE OF PRINTING THE BOOK “NAKHASHAVIGH”
BY KHACHATUR ABOVYAN

MAYA GRIGORYAN

Summary

Keywords: Kh. Abovyan, Tiflis, “Nakhashavigh”, Arzanyants brothers, XIX century, bibliography, censorship, history of Armenian printing, printing house.

The textbook of the outstanding Armenian writer, educator, teacher, public figure Kh. Abovyan (1809–1848) “Nakhashavigh” was written from 1836 to the beginning of 1838 primarily for applying it in the private school founded by the author. The book entered the printing house at the beginning of 1838 when the Arzanyants brothers officially started their printing activity. During this period, the first 18 press sheets were printed before the first warning was received about the author’s sponsor-Hessenmuller. The book was not compiled and distributed at that period. After Hessenmuller’s arrest, Kh. Abovyan tried to get official permission and support to print the book, but the book was rejected several times by various committees and reviewers. The printing was completed and handed over to the author at the beginning of 1844, before the month of April.

The book was printed at the Arzanyants brothers printing house in Tiflis. The hypothesis of printing the book at Nersisyan school or other printing house is refuted. It was not used as a textbook; the author kept the copies and distributed them to private individuals. Two copies of the book have been preserved: one in the Matenadaran after M. Mashtots, the other in the Museum of Literature and Art after Yeghishe Charents, RA.

Maya Grigoryan – Candidate of Philological Sciences, Director of the Fundamental Scientific Library of NAS RA, Lecturer at the Department of Museum Studies and Bibliography of ASPU after Kh. Abovyan. Scientific interests: history of Armenian literature, Armenian printing and bibliography in XIX–XX centuries. Author of 52 articles. ORCID:0000-0002-7989-0514. m.grigoryan@sci.am